

զնոսին՝ ծածուկ իմն հնարիւք եւ ճարտարութեամբ, քան զբազում ազգաց լեզուս մեծանայ, ազնուանայ եւ ի գլուխ բարձու կատարման հասանէ:

Եւ քանզի ուսումն ամենայն բարբառոյ բռնագրով եւ դպրութեամբ յաջողի, պատշաճ համարեցաք համառօտ ինչ Գպրութիւն ի սկիզբն Բառարանիս յաւելլուլ՝ քաղեալ համառօտիւք ի նշանաւոր Գպրութենէ Ֆրանսոս-Ճէվրէիայ՝ որ ինչ օգնական գտանիցի առ բարուք խելամտութիւն սեպհական բնութեան եւ առանձինն հանգամանաց կամ գաղտնեաց բարբառոյն, յարեցաք ի նոսին եւ կարեւոր ինչ տեղեկութիւնս վասն արաբականին եւ պարսկականին որ չգտանէին ի նմին:

Այսչափ ինչ զնպատակէ եւ զպայմանէ յօրինուածոյ մատենիս տուեալ տեղեկութիւն, նուիրեալ մատուցանեմք զայս զգոյշն այլ զճանր վաստակ մեր ի մեծ փառս Աստուծոյ միայնոյ:

Ի վիեննա, յ7 Մարտի, յամի 1883.

Հ. Ամբրոսիոս վ. Քիւփէլեան.

Կ. Ս.